

ՄԷՐ ՄԱՐԹԻԱՅԸ

ՀԱՅԱՍՏԱՆԻ

ԼՐԱԳԻՐ ԱԶԳԱՅԻՆ

— ԹԵՐԹԸ 1 1/2 ԴՐԱՄ ԹՈՒՂԹ —

ԱԶԳ

Թղթադրամը երթալով կոտորելուն վրայ, թերթերնիս ձեռքէ հատը ողջ թուղթ 1 1/2 զրշի կ'ծախուի:

Կ'խնդրուի նաեւ ծանուցանել:

ԼՐԱԳՐՈՅ երկամսեայ դադարման պայմանաժամը մարտ 10 ՇԲ. օրը լրանալով, յառաջիկայ ԲՇ. օրուրէն վերստին հրատարակութեան պիտի ըսկըսի:

ՆԵՐԿԱՅ ԿԱՑՈՒԹԻՒՆԸ

Քանի մ'օրէ ի վեր է որ Արեւելեան Ռումէլի մէջ եամ պօլու, Սլիւնո, Խասքէօյ և այլքանի մը տեղեր, երմտական գործոց ընդհանուր տնօրէն Պ. Շմիթի դէմ պուկարաց կողմանէ եղած խռովայնոյց ցոյցերն ու անկարգութիւնները, որոնք երթալով տեսակ մը յիշգրտութեան կերպարանք կատարան, շատերուն ծանր մտատանջութիւն մը կ'պատճառեն, նքկատելով միւս կողմանէ թէ ինչպիտի բլլայ այդ գաւառին վիճակը որոյ ժողովուրդը անդիծալը երկու առած և քաջաբերութիւն գտած բլլալով, ամեն բան ընելու կ'յանդգնի և վերջին աստիճանի զոռւածէ Արեւելեան Ռումէլիի նկատմամբ Պերլինի դաշնագրին գործադրութիւնը արգիլելու համար, մանաւանդ երբ Ռումսերն ալ պարպեն ու թողուն յիշեալ գաւառը, որք ըստ Պերլինի դաշնագրութեան՝ ասկէ 6 շաբաթէն պիտի սկսին պարպելու:

Ուստի իրաց ներկայ կացութեան մէջ ամենէն տակի կարեւոր խնդիրը սա է թէ՛ ինչպիտի բլլայ Արեւելեան Ռումէլիի վիճակը Ռումաց մեկնելէն ետքը:

Պ. Շմիթի դէմ Պուկարաց յարուցած դժուարութիւններն ու անկարգութիւններն, չատերուն այնպէս կ'թուի թէ՛ ասոնք Արեւելեան Ռումէլիի նկատմամբ Պերլինի դաշնագրին անգործադրելի ձգելու համար է, որպէս զի վերջէն սա ալ Պուկարիոյ հետ միացնելու դիւրութեան ճանքալ մը պատրաստութեամբ բլլայ, և մինչև իսկ ըսողներ ալ կան թէ Ռումսը իրենք են զաղտնաբարձ ձեռքի տակէ պուկար ժողովուրդը զրգուողները, որ այս խռովութիւններն հանեն, ինչպէս կակնորկէր Տէպայի վերջին մէկ յոդուածը, զորոյ համառօտ իմաստը մեզ կ'հաղորդէր առջի օրն հեռագիրը Բարիզէն փետր. 17 թուով:

Տէպա իր այդ յոդուածոյն մէջ Պերլինի դաշնագրին պահպանելու նպատակաւ՝ Անդղիոյ և Աւստրիոյ մէջ գաղտնի համաձայնութիւն մը կեցած բլլալուն իրր փառս կ'համարէր վիէննայի Բօլիի ինչ ֆորէսքօնտէնց թերթին մէջ հրատարակեալ Լորտ Սալիսպրիի առ թէ՛ իր պուկի անդղ դեպքանն ուղղեալ յնվ. 26 թուով մտերմական մէկ հեռագիրը:

Լորտ Սալիսպրի իր սոյն մըտերմական հեռագիրը ուղղած էր Կորչաքօֆ իշխանին զրկած մտերմական մէկ գրութեանը առթիւ գոր հեռագիրը Ռումիոյ շրջաբերական անուանեցին, իսկ սա պաշտօնական ոսէ հանգամանք մը չունէր, որով Կորչաքօֆ իշխանը տէրութեանց ուշադրութիւնը կ'հրաւիրէր Արեւելեան-Ռումէլիի և Պուկարիոյ գտնուելիք վտանգաւոր վիճակին վրայ, եթէ համազգային յանձնաժողովոյ միջեւ ելած անհամաձայնութիւնք եւ դժուարութիւնք չ'հարթուին՝ յիշեալ գաւառներն պարպելու որոշեալ թուականէն առտը:

Լորտ Սալիսպրի ալ իր մըտերմական հեռագրին մէջ, զոր կուղղէր առ Լորտ Լօֆթիւս, կ'յանայ հաստատել թէ Կորչաքօֆ իշխանին նախատեսած վերադարձը յառաջ բերող բանքն ինչեալ երկու գաւառներն դաշնագրի առաջ գործակատարաց ընթացքն է, եւ այդ ապագայ վտանգին ալ իրր պատճառ ցոյց կ'տայ 1) Արեւելեան-Ռումէլիի կառավարութեան կեդրոնը Սօֆիա փոխադրուիլը, և 2) Արեւելեան-Ռումէլիի քաղաքային գործոց և Պուկարիոյ քաղաքային գործոց բանակը ի մի մարմին ձուլուիլը, որոց սպայակոյսը Պուկարիոյ մէջ կ'կենայ:

Լորտ Սալիսպրիի առաւարտէր իր հեռագիրը ուշադրութիւն հրաւիրելով թէ ինչ ծանր պատասխանատուութեան ներքեւ կ'գտնուին ամեն անոնք՝ որք Պուկար ժողովուրդը ցնորքներու մէջ կ'օրօրեն և կեղծ յոյսերով կ'մտորեցնեն զանոնք, և թէ քր աստիճան ստիպողական և անհրաժեշտ է Պուկարիայէն Արեւելեան-Ռումէլիի բաժանուլ մը պատրաստել, Պերլինի դաշնագրին ոգւոյն և տառին համաձայն:

Սոյն հեռագրին իմաստէն յայտնի կերպի թէ՛ Անդղիոյ կառավարութեան դիտաւորութիւնն է Պերլինի դաշնագրին կիտ առ կիտ գործադրութիւնը պահպանելով, Արեւելեան-Ռումէլիին ու Պուկարիան իրարմէ գտնուելու և բաժնուած պահել, որոց պահ մը խնդիր եղած էր միացումը, և թէ Արեւելեան-Ռումէլիի մէջ ծագելիք վտանգները Ռումական լրտեսներու գործը կանուանէ, որոնք ժողովուրդը կ'զրգուեն եղեր Պերլինի դաշնագրին գործադրութիւնն արգիլելու:

Ահաւասիկ Կորչաքօֆ իշխանին նախատեսած վտանգներն

սկսած են երեալ, Ռումաց յիշեալ գաւառը պարպելուն հաջիւ 6 շաբաթ մնացած է, և ահա Պուկարը մէկ շաբաթուան մէջ 4 անգամ երմտական ընդհանուր տնօրէն Պ. Շմիթի դէմ անհանդուրժելի հալածանք մը հանեցին, յարձակումներ ըրին, կառքը խորտակեցին, նստած տանը պատուհաններն և ապակիները ջախջախեցին, սպաննել սպառնացան, ևն. բայց և այնու հանդերձ Պ. Շմիթ տակաւին կ'չարուանկէ վարել իր պաշտօնը:

Կրսն թէ Ռումական լրտեսներն դիտաւոր ընել կ'տան կոր Պուկարաց այս անկարգութիւնը, որպէս զի համազգային յանձնաժողովն ալ յոյսը կըտարելով իր կազմակերպութեան օրէնքը հող կարենալ գործադրելէն, տեղեկագրէ տէրութեանց թէ՛ Արեւելեան Ռումէլիի գաւառը ըստ Պերլինի դաշնագրին կազմակերպելն ու կառավարելը դժուար և անհնաւրին պիտի բլլայ, որպէս զի զայն Պուկարիոյ հետ միացնելու գործը դիւրանայ, Մինչև իսկ ըսողներ ալ կան թէ՛ Ռումական գործերը դեռ Արեւելեան Ռումէլիի մէջ գտնուելուն համար է որ Պուկարը համարձակութիւն գտնելով այս անկարգութիւնները կ'յարուցանեն, երբ Ռումսերն քաջուին անգամ մը, Պուկարներն ալ կամայականայ ինքզինքնին վար պիտի զնեն և պիտի զգաստանան:

Ասոնք կրնան մինչև աստիճան մը ստոյգ նկատուիլ, իսկ պուկարաց հանած այժմու խռռովութիւններն ու դժուարութիւններն ուրիշ գաղափար մը կ'տան մեզ, Սոցա այս քանիցս ըրած ցոյցերէն այնպէս կ'երևի թէ՛ Պուկարը Պ. Շմիթի դէմ շարունակ դժուարութիւն ու խռովութիւն հանել որոշելու են:

ու թէ համազգային յանձնաժողովոյ կողմանէ իրեն տրուած ելմտական վերատեսչութեան պաշտօնն արգելելու համար, այլ Պ. Շմիթի անդղիացի գործակատար մ'ըլլալուն համար, և ասով Պուլկարք Պ. Շմիթի անձին վրայ Անգղիոյ դէմ ունեցած հակակրօթիւնին ու վրէժնդրութիւնն յազեցնել կ'կարծես, անոր համար որ Պերլինի քօնկրէին մէջ Անգղիա եղած էր գլխաւորաբար Պուլկարիոյ միութիւնը անջատողը, և Պարլամէնտի հարաւային կողմի Պուլկարիոյ մասը, Արեւելեան Ռումէլի անուամբ օւղղակի դրան քաղաքական և զինուորական իշխանութեանը տակ դնել տուողը:

Արեւելեան Ռումէլիի պուլկարներն ալ ահա Անգղիոյ այս բրածին վրէժն անենելու համար է որ այժմ Պ. Շմիթի դէմ շատ ըունակ անկարգ ցոյցեր բնելու ելած են, մինչդեռ իրեն ընկերացող գաղղիացի օգնական քօմիսէր Պ. Գուլթուրի նկատմամբ ալ համակրական ցոյցեր ընելէ, և հուրրաներով «կեցցէ՛ Գաղղիա» աղաղակելէ չեն դադարիր Պէտք է գիտել թէ՛ նոյն իսկ գաղղիացի Պ. Գուլթուրի ալ Պ. Շմիթի ելմտական վերատեսչութեան պաշտօնը կատարելուն դիւրութիւն մը տալու համար սորա ընկերացած ըլլալով, իրեն դէմ ալ նմանօրինակ թշնամական ցոյցեր ընելու էին Պուլկարներն, եթէ բուն նպատակն ինչ բլլար ելմտական վերատեսչութեանը դէմ բողոքելով զայդ արգելուլ:

Ռայց այնպէս չըլլար կոր, այլ միևնոյն պաշտօնով այցելուութեան ելնող երկու անձանց մէկուն դէմ թշնամական ցոյցեր տեղի կուենան, սորա անգղիացի մ'ըլլալուն համար, իսկ միւսին նկատմամբ համակրական ցոյցեր կրլլան դարձեալ միևնոյն ամբողջէ՛ մինակ իր գաղղիացի մ'ըլլալուն համար:

Պուլկարաց այս իրարու հակաակ ցոյցերն մեզ այնպէս կարծեցնել կ'տան թէ՛ զատուք Պ. Շմիթի դէմ այս աստիճան անկարգ ցոյցերու գրգռող բանք՝ ոչ թէ Պերլինի դաշնագրին գործողութիւնն արգելելու դիտումն է, այլ Անգղիոյ դէմ Պուլկարաց ունեցած ատելութեան և հակակրօթեան արտայայտութիւնը, այնպէս որ եթէ Պ. Շմիթի տեղ գաղղիացի կամ գերմանացի մը Արեւելեան Ռումէլիի ելմտական գործոց ընդհ. տնօրէն ընտրուէր, բնու այս հիմնկուան անկարգ ցոյցերը տեղի պիտի չունենային:

Հետեւաբար մեք սխալ կը դատեմք այն կարծիքը թէ Պուլ-

կարաց այս խռովայող ընթացքը Պերլինի դաշնագրին գործողութիւնը պիտի արգելու և ատկէ մեծամեծ վտանգներ պիտի ծագին ապագային մէջ:

Երբ մէկ կողմէն Պուլկարք Անգղիոյ դէմ իրենց հակակրօթիւնն ու ատելութիւնը ցոյց տալու ետեւէ են, ասոցին մայրաքաղաքիս մէջ վեհ. Սուլթանը ալ Անգղիոյ վրայ իւր ունեցած բարեկամութեան և համակրութեան փառաւոր արտայայտութիւն մը կ'ընէ, անգղ. նաւատորմին հրամանատարն ու սպայներն պալատը տրուած շքեղ կոչուներէ մը հրաւերելով, ինչան երախտագիտական գուհունակութեան, ճիշդ այն օրը՝ յորում անգղ. նաւատորմին ալ քաղաքական պաշտօնն այլևս կ'վերջանայր Մարմարայի մէջ:

Անգղիական տորմիդը Տարտանելէն ներս մտաւ երբ հաւանականութիւն կար թէ ռուսական բանակը կ'Պուլսը պիտի գրաւէր: Տարաւոյս չկայ թէ զՌուսիա կ'Պուլս մտնուէ արգիւղ զօրաւոր պատճառներէն մէկն ալ Անգղիոյ նաւատորմին աստ ներկայութիւնն էր, որոյ վրայ Ռուսիա ևս ստիպուեցաւ Այսթէֆանօյի նախագահագիրը քննելու համար տէրութեանց ժողովոյ մը (Քօնկրէի) գումարման հաւանութիւն տալ:

Այս տեսութեամբ Ռուսը մեծապէս պարտական և երախտագրտ կ'մնար անգղիական նաւատորմին, Պուլսը ռուսական գրաւմանէ մը փրկած ըլլալուն համար: Ուստի և այս պարտականութեան զգացմամբ ու շնորհակալութիւնը յայտնելու նպատակաւ էր որ վեհ. Սուլթանն ալ անգղ. նաւատորմին հրամանատարն ու պաշտօնակալները փառաւոր խնջոյքի մը հրաւիրած էր պալատը:

ԳԱՆՁԱՅԻՆ ՎԻՃԱԿՆԻՍ

Թօքվիլի ծրագրին մերժութեւնն հետ, թղթագրամն ալ տարօրինակ կերպիւ ինտելլեցաւ: Եթե թէ Թօքվիլի ծրագրին յաջողութեամբ գլուխ ելնելը առելի թղթագրամին վիճակին պիտի նպաստէր, որոյ բարձմանը պիտի յատկանայր ըլլալիք փոխառութեան 8 միլիոն օսկոյ մէկ մասը, իսկ առ այժմ ըլլալիք փոխառութիւն մը ալ չկենայր, թղթագրամն ալ մնացած է վախճանին ինչ ըլլալը չգիտցուելիք վիճակի մը մէջ:

Սակայն թղթագրամին այս աստիճան անկման պատճառն եղած է գլխաւորաբար երեկ հրատարակեալ կայս. հրամանագիր մը, որ կ'ծանուցանէ թէ՛ տէրութեան բոլոր հասոյթներն

ու տուրքերն, որք մինչև ցարդ քայմէով կ'վճարուէին, յիշեալ տրոց 1/5 մասին տեղ՝ ոսկին 400 դրշ. ողջ թղթի հաշուով, թղթագրամ պիտի առնուի:

Մեր պաշտօնակոն ծանուցումները և թէ գլխաւոր պալատութիւն մը ունին՝ այն ալ սա է թէ՛ բնաւ կատարեալ հասկցուելու ոճով մը չեն գրուել, այլ միշտ մէջը մութ և անորոշ մնացած կողմ մը պիտի գտնուի, Այսպէս է նաև վերոյ յիշեալ հրամանագրին կամ պաշտօնական ծանուցման խմբագրական ոճն ալ:

Կըսէ թէ Տէրութեան ընդհանուր հասութիւց 0/0ին 20ը ոսկին 400 դրշ թղթի հաշուով քայմէ պիտի առնուի. լաւ բայց մնացած 0/0ին 80ին փոխարէն ինչ տեսակ պիտի առնուի, թող թէ մէթալիք, այս կետք յայտնի չէ:

Մեք հոս Պուլսոյ մէջ խել մը տուրքեր կ'վճարենք տէրութեան, 100 դրշին տեղ 100նոց քայմէ մը տալով, ուստի ըստ մեզ այնպէս կ'հասկցուի թէ՛ դարձեալ մեր այդ վճարած տուրքերուն 0/0ին 80ին տեղ 80 դրշին քայմէ պիտի տանք, մնացած 20 դրշին փոխարէն ալ և հաւտ 20նոց թուղթ. ըսել է թէ տուած տուրքերնիս ամենքն ալ ողջ քայմէի վրայ հաշուելով, 6/0ին 60 վերագիր մը պիտի ըլլայ:

Գոնէ այս կերպով կրնամք բմբռնել յիշեալ հրամանագրին իմաստը, զի եթէ ուրիշ կերպ հասկնալու ըլլանք, այսինքն թէ տրոց 0/0ին 80ը գումար փոխգրքում կամ մէթալիք, և միւս 20ը քառապատիկ գնով քայմէ, այն ատեն թղթագրամը հրապարակին վրայ, փոխանակ մինչև 520 ելնելու, թերեւս ունէ գին և և արժողութիւն մը պիտի չուենար, զի Ռ. Դուռն իր այդորոշմամբ պիտի հաստատէր թէ՛ ինքն ալ ունէ յարգ մը չը գնել իր թղթագրամին վրայ, և եթէ կառավարութիւնը չը յարգ եր իր թղթագրամը, տարակոյս չկայ թէ ժողովրդին քով ալ մէկ ստակի յարգն ու արժողութիւնը չմնար թղթին:

Վագրել երեկ կ'հաւաստէր թէ՛ Ռ. Դուռն ինքն այս անգամ մերժելով Թօքվիլի ծրագիրը, իր գանձային բարութեւնը ձեռք բերելու համար ուրիշ տեսակ միջոցի մը պիտի գտնէ, Մի՛ գուցէ այս եղած ըլլայ Դուռն ձեռք առնելիք միջոց թէ՛ Գանձը բարւոքելու համար կամաց կամաց թղթագրամը չընդունէ, և կամ ինչ տեղ 4-5 պահանջելու ելնէ, եթէ գանձային բարւոքման համար մտածուած միջոցը աս է նէ՛ ստուգիւ շատ սքանչելի միջոց:

որ բնաւ տնտեսագէտի մ'ալ մտքէն անցած չէր: Ռայց այն ատեն հասարակութիւնն ինչք. նէ թղթագրամը, որով ամենուն ալ գողը լեցուց գանձը, և այժմ ետ չառնելու կ'նկրաի շիտակը խիստ հազուագիւտ միջոց մ'է ասի, փոխ ստակ առնել, պարտամուրհակ տալ, և վերջը իր մուրհակը չճանչել, կամ 0/0ին 20 կամ առելի պալատ վճարել ուղիւ: Ասի ամեն մարդու գործ չէ մտածել ու գտնել:

Այս նոր որոշման մասին Դուռնը սա՛ հաշիւն բրած ըլլալու է: Տէրութեան բոլոր հասութիւց տարեկան գումարը 10 միլիոն ոսկոյ կ'հասնի, եթէ ասոր 0/0ին 20ին, այսինքն 2 միլիոն ոսկոյ տեղ թղթագրամ առնէ ոսկին 400ին հաշուով տարին 8 միլիոն 100նոց թուղթ պիտի ժողվէ, ժողված այս թղթերն ալ ոչնչացնելու պայմանաւ, արդ քանի որ այսօր հրապարակին վրայ ալ 14 միլիոն 100նոց թուղթ կայ, այս եղանակաւ երկու տարեկէն պակաս ժամանակի մէջ ամբողջ թղթագրամը վերուցած պիտի ըլլայ:

Այս տեսակ միջոցներով գանձային բարւոքումը ձեռք ձգել յուսալուն, չիտակը խօսելու համար, մեր խելքը չհասնի, ուստի իրագութեանց ելքին սպասելու կը պարտաւորինք, տեսնելու համար թէ այս մեր ընթացքին վախճանն այսպէս ո՛ր պիտի երթայ:

Ս. Չ. Գ. Ա. Յ. Ի. Ն.

Թերթերէն մին երեկ կ'հաւաստէր թէ՛ Դուռն կողմէն Հասարակ զրկուելիք յանձնաժողովոց ետ մնալուն պատճառն է եղեր՝ դաշնագիր տէրութեանց խորհրդով Հայաստանի մէջ գործողութիւնը բարենորոգմանց նոր ծրագրի մը պատրաստուելու վրայ ըլլալը:

Եթէ ստոյգ է ասի՛ այն ատեն Ս. Պատրիարքն իր հրապարականք ետ առած պիտի ըլլար, մինչդեռ այնպէս չէ:

— Հաւելակէն Պատրիարքարան հասած պաշտօնական հեռագիր մը՝ Ուրեցի բանտարկեալներէն նորէն քանի մը հոգի մեռնիլը կ'ծանուցանէ բանտին մէջ: Ասոնցմէ 40 հոգի հիւանդութեամբ պտուկած են և վիճակնին շատ դէշ է եղեր:

— Սոսկ կաթողիկոսին զրկած մէկ տեղիկագրէն ալ կ'իմացուի թէ՛ Ուրիոյ Գայմագամը և Մարաշի միւթեարքի Հաւել կը գտնուին, և կաշխատին Զէյթունի խնդրոյն լուծմանը դէմ գծուարութիւններ հանել, միևնոյն գիրը Հաւելի հուսակալին դէմ ալ գանգատներ կ'պարուենակէ:

—Հալէպէն փետր. 23 թիւ նամակ մ'ալ կըսէ թէ, Ռ. լինիա տակաւին չորս կողմէն պաշարուած կ'մնայ Զէյթէնքերէն ու Տաճկներէն, դրսի հետ հաղորդակցութիւնը բոլորովին կըտրուած է:

Տեղական տաճկախոս հայ թերթ մը անդիւր օր ծանուցանել կարողորար թէ կառավարութիւնը Ռ. լինեցող խնդիրքը լսելու տուրքերնին իջուցներ եւ հայ կառավարիչ մը դրեր է եղբոր, Կրնայ ըսել մեզ այսօր թէ ո՛ր կ'նստի այժմ Ռ. լինիայ այդ հայ կառավարիչը:

—Տիգրանակերտէն ալ հասնող լուրերն ոչ նուազ ախուր են, Հակառակորդ մասին ընդգիծութեանը վրայ փոխկայս եպիսկոպոս ալ առաջնորդութեան հրաժարելու ստիպուել է: Երէկ Տիգրանակերտի ֆրիւսանի ազգայնոց կողմէն մեր Պատերազարանը քաշուած հեռագիր մը գոհունակութիւն յայտնելով յիշեալ առաջնորդին նըկատմամբ, կըսէ թէ սորա ասկէ հեռանալը ֆլուսակար է, ուստի և նորէն վերահաստատութիւնը կ'իսկողնէ: Պատերազարանն արդէն երէկուան բօսթայով գրեր էր Տիգրանակերտի առաջնորդին և տեղւոյն ժողովոյ՝ որ հակակրօթիւննին մէկգի թողովով համակամութեամբ և սիրով գործեն:

—Հալէպի գուկն, ժողովոյ մեկ տեղեկագիրն ալ կըսէ թէ, Սոյի Մկրտիչ կաթողիկոսին Հալէպ գալ նստելուն նպատակն է եղբոր՝ տեղւոյն կառավարական իրաւունքը ժողովրդին ձեռքէն կորցելով, իր իրաւասութեանը տակ առնուլ:

Թէ Հալէպի և թէ Տիգրանակերտի սոյն խնդիրներն այսօր խառն ժողովոյ պիտի ներկայանան:

—Տիգրանակերտէն քաշուած ուրիշ մէկ հեռագիր մ'ալ կըսէ թէ՝ տեղւոյն Հակահաստանանց հրաման եկած ԲԼԼԱՐՈՎ որ եկեղեցիներն Հաստանանեանց յանձնեն, ասոնք այս հրամանը չեն ուզած գործադրելու տակ և երկու կուսակցութիւնէ ժողովուրդը իրար իյնալով կառավարութիւնը միջամտել և Հակահաստանանեանքէն մէկ քանին բռնելու բանտարկելու է:

—Պատերազարանը հեռագրեր է Մշոյ Մամբրէ Սին որ իրեն հետ պէտք է մոյրաքաղաքս գան նաև թէ զինքը ամբաստանող և թէ իրեն ջատագով կեցող միտքան վարդապետներն ալ:

—Այսօր Խառն ժողովը նիստ ունի, վաղն ալ ընդհ. ժողովը:

ՄԵՈՅ ԽՆԴԻՐՆ
(Շաբ. թիւ 1866)

Արդ գալով վանայ միտքանութեան, որ դրդամբ Մամբրէ Ս. ինքզինք խառնութեան ասպարէզը կ'նետէ, և իր խելքովը ազգը խաբելու կ'ճգնի, այնպիսի մէկը կուզէ արդարացիքն՝ որ բոլոր ապօրինաւորութեամբ լեցուն է: Արդ եթէ միաբանութեան վկայութիւնն իրաւ է, ո՛չ ապաքէն մեզ ևս հանրագիր տուած են թէ, ինչ որ մեզ նկատմամբ կ'ողորձեն՝ զրպարտութիւն է, ուրեմն այսօր ինչպիսի հարկէ բռնադատեալ իրենք զեւզ զրպարտելու կենին:

1. Բացէ ի բաց կ'ստէ միաբանութիւնը, երբ կ'հարցնէ թէ Վանօրէից խորհրդոյ հրահանգին՝ վանահայրն պաշտօնական կերպով քննարկեցաւ, և երբ վարչութիւնէն հրահանգ ընդունեցին:

Վանուցս մէջ երբ բոստ տըրամագրութեան վանօրէից խորհրդոյ հրահանգին՝ վանահայրն պաշտօնական կերպով քննարկեցաւ, և երբ վարչութիւնէն հրահանգ ընդունեցին:

Երբ վանուցս որոշեալ ծախքերն վարչութեան հաւանութեամբ եղած են:

Վանուցս կառուածոց և հաստից ինչ խնամք տարուած էր, և անոնց նկատմամբ ինչ հաստատութիւն ունիք Պատերազարանին մէջ, երբ վանուց խնամք տանելով կտակագիրն հաստատեցիք, որոց խօսքն անգամ չէ եղած, ընդհակառակէն ինչ որ կար՝ զայն ևս կորոյս Մամբրէ Ս.: Ուր է Սէֆէրեան հանգուցեալ Առաքել վարդապետի 11 սակոյ պարտուց մուհակը, ուր է Միսթար վարդապետի արկղէն ելած մեծ աղամանդ և թանկագին քարք, որ միայն արկղէն դուրս ելած օրն տեսնուեցաւ:

Երբ յարաբերութիւն կապեցիք դաւառական առաջնորդին հետ, որ յիշեալ առաջնորդն ալ վանական գործոց պաշտպան կանգնէր, այնպէս որ վանահայրն ալ վանական գործոցը համար կ'ստիպուէր ուղղակի ինքը Մշոյ կառավարութեան դիմելու: Արդ եթէ Մամբրէ Ս. Մուշ խառնութեան համար չէր երթար, վանուցս կողպատման մասին ինչ տեսակ լիութիւն քրաւ տեսնենք Մշոյ առաջնորդի հետ: Ոչինչ, ինչպէս ուրեմն կ'իտարէ թէ վանահայրը վանական ինչ ինչ գործոց համար Մուշ կ'երթար:

Չեր վանական վարչութիւնը՝ վանուց վերաբերեալ շարժական և անշարժ ստացուածոց ղեման և վաճառմանը մասին՝ երբ արտօնութիւն ուղեց կեդրոնական վարչութիւնէն, և ինչ պակաս թողուց որ վանուց մէջ ի վաճառ չելաւ, յագուտ վանուց՝ գնում մը ոչ երբէք, և թէ վաճառումնիդ կեդր. վարչութեան հրամանաւ ըրերէք, մեք ըսելիք մը չունինք:

Կարգեալ Վ. Խաչան
Շարունակելի

ՀՅՈՍ.ԳՐԱԼՈՒՐԻ

Այս աստիճան

Բարից 18. — Սուտ է այն զրոյցը թէ Պ. Վատինկթօն պաշտօնէից գահերէցութիւնէն պիտի հրաժարի և պաշտօնէութիւնն պիտի փոխարին:

Լոնտոն 18. — Պ. Բէմպէլ հարցումն բնելով թէ երկրպետի անդգ. հիւպատոսը ե՞տ կանչուած է, թէ մինակ խորհրդակցելու համար կանչուած է, Պ. Պուրք մերժեց պատասխանել:

Գօթէնհակ 19. — Գերմանիա պատասխանեց Տանիմարքայի թէ Շլէզվիկի խնդիրը լուծուած է Աւստրիոյ հետ կնքուած վերջին դաշնագրով:

Պերլին 19. — Վիլհէլմ կայսրը իւր տօնախմբութեան օրը շնորհաւորութեան համար ոչ զոք պիտի բնդունի:

Աթէնք 19. — Բրէվէզայի մէջ սահմանագլխոց յանձնաժողովն երէկ գումարուելով, օսմ. պատուիրակներն՝ ԱՅՊԵ Բրօթօքօլի մէջ նշանակուածէն տարբեր սահմանագիծ մ'առաջարկեցին, որոյ յոյն պատուիրակը դէմ կեցան, ըսելով թէ Բրօթօքօլէն դուրս ուրիշ հիման մը վրայ չէին կրնար բանակցել, և թէ այդ Բրօթօքօլին ոգուոյն եւ տառին հակառակ ունէ վիճարանութիւն ունայն կ'նկատեն: Նիստը այն ատեն փակուելով, յոյն պատուիրակը առժամանակեայ հրաժեշտ (քօնժէ) առին օսմ. պատուիրակներէն և Ամֆիթրիթ շոգենալը հեռնելով այսօր մեկնեցան Բրէվէզայէն Եւանստան երթալու:

ԴՐԱՄԱԿԱՆ

Այս առաւօտ բացուեցաւ	13.01
Թղթադրամ	520.00
Բուժէլի	46.00

ՎԵՐՋԻՆ ԼՈՒՐԵՐ

Գանձային վիճակնուս մէջ յիշուած կայս. հրամանագրին համեմատ, Գանձը 7 յօդուածէ հետեւեալ կանոնադրութիւնը կը հրատարակէ, տուրքերը ողջ ստակի վերածուելուն և Բայմէի բարձմանը եղանակին վրայ:

1) Ըստ յայտարարութեան Գանձուն՝ ոսկին 400 զրշի հաշուով քայմէն վերցնելու համար, (եթէ առաջարկեալ փոխառութիւնը յաջողէր) այս անգամ մարտի 8էն սկսեալ օսմ. տէրութեան բոլոր հասոյթներն ալ քայմէի շրջաբերութեանէն առաջ եղածին պէս, ողջ ստակով պիտի հաւաքուին:

2) Եթէ նոր փոխառութիւնը յաջողի՝ սորա մէկ մասը պիտի գործածուի թուղթ վերցնելու, իսկ եթէ չ'յաջողի՝ առ նուազն 16 ամիս թուղթը շրջաբերութեան մէջ մնալով, բացի մաքսատուրքէն, միւս բոլոր տուրքերուն Ռ/Օին 20ին տեղը 1 ոսկոյ փոխարէն 400 զրշ. թուղթ, և 100 զրշ. մէթալիքի փոխարէն, ոսկոյ հետ տարբերութիւնը վար իջնելով, քանի զրշ. թղթադրամ կ'ընէ նէ, նոյն հաշուով քայմէ պիտի առնուի:

3) Մինչև այս (մարտ 8) թը. ուսկանք անվճար (պաքայէ) մը նացած տուրքերը, որք Գանձուն առնելիքն են, շրջ. յօդուածին տրամադրութեանը համեմատ պիտի պահանջուին ու առնուին:

4) Այս կերպիւ հաստից և տրոց Ռ/Օին 20ին տեղ արքունի սնտուկներէն ընդունուելիք բոլոր քայմէներուն թուրանները՝ վճարողին աչքին առնելու կտրուելով, իր ձեռքը պիտի յանձնուի, և քայմէներն վարդուելով, ետքէն Գանձունը նելիք տնօրէնութեանը համաձայն սյուրուելով պիտի ոչնչանան:

5) Սոյն որոշման հրատարակման ու գործադրութեանը թը. ուսկանին (մարտ 8ին), արքունի (միւրի) սնտուկներուն մէջ պատրաստ գտնուած բոլոր քայմէներն ալ ժողովին ձեռօքը համարուելով յատուկ առամարի մէջ քանակութիւնը նշանակուելէն ետքը, թուրանները կտրուելով թղթերը պիտի պահուին, վերջէն փոխառութիւնը յաջողելուն՝ 400 զրշ. քայմէն 1 ոսկիով փոխանակելու համար:

6) Հաստիցը Ռ/Օին 20ին տեղ քայմէ արքունի սնտուկներէն ընդունուելուն պէս ոչնչացուելուն պատճառաւ՝ այսուհետեւ թէ Միւրիի սնտուկներէն և թէ Գանձէն բնաւ ունէ մէկու մ'ալ քայմէ չտրուելով, բոլոր ամսական թուղթներն ալ բոստ առաջնոյն ողջ ստակով (մէթալիք) պիտի վճարուին:

7) Սոյն հրամանագրին թը. ուսկանէն առաջ, մնացած թէ ամսականի և թէ ունէ ծախուց պարտքերը, թէ՛ Գանձէն և թէ՛ դաւառաց սնտուկներէն, 1 ոսկին 400 զրշ. թղթի հաշուով ալ և ալ տեսակ մետաղեայ դրամով պիտի հատուցուին: (Այս յօդուածէն մեք սակէս կ'հասկնանք թէ՛ ասկէ առաջ տէրութեանէն ամսական առնելիք ունեցողներն՝ պահանջնուն 400 զրշ.ին տեղը 1 օսմ. ոսկի պիտի առնեն, կամ այդ հաշուով աւերի ունէ ստակ):

Սոյն հրամանագիրը հրատարակող պաշտօնական ազգը կ'ծանուցանէ նաև թէ, դարձեալ մայրաքաղաքիս մէջ հացը քայմէով հօխան 6 10 փարայի ծախուիլը, ինչպէս նաև Օսմ. Պանքայէն մարդ զուլա 2 ոսկի թուղթ առնուելով ոսկի տրուելով ոսկի տրուելը պիտի շարունակէ:

—Վագթ ալսօր կըսէ թէ՛ թօքվիլի ծրագիրը բոլորովին մերժուելով, այժմ Օսմ. պանքային հետ ուրիշ գաղղ. և անգղ. փխաւոր մէկ քանի Պանքաներ միացել, և Բ. Դրան հետ նոր պայմանագիր մը ծրագրելու ձեռնարկել են, Այս ծրագրին համեմատ օսմ. արժէթը վերածման գործը 1-2 տարի ետ պիտի մնայ:

—Վեճ. Ս. Ապրօ էֆ. Պետութեան խորհրդոյ անդամ անուանելով, սորա տեղ Գալի. տալի պէյ խարիճիէ Գեաթիպի անուանեցաւ:

—Օտեան էֆ. մօտ օրէն հոս պիտի դառնայ իւր պաշտօնը շարունակելու:

—Երովրախն անխելին փոխար-
քայ Պարեաթինսքի իշխանը, որ
Շէյխ Շամիլը բռնելով կողմա-
սու գաւառը խաղաղեցոյց մտա-
ցին ճինէվրա քաղաքին մէջ
վախճանելու է։

—Չմիւռնիայէն հետեւեալ
տեղական լուրերը կ'հաղորդեն,
Գողթնի թիւներն ու զինեալ յար-
ձակումներն միշտ կ'շարունակ-
ուին, որոց առջեւ տեղական իշ-
խանութիւնը կամ խուլ է կամ
անկարող։ —Պուրնապաթի մէջ
գողերը եւրոպացիի մ'ախուռը
մտնելով 2 ձիերը կ'յափշտակեն։
—Անցեալ դ. օր ալ Յունաց
Հիւանդանոցին փողոցը զինեալ
չարագործք մէկ քանի երիտա-
սարդաց վրայ յարձակելով, ժա-
մացոյց ոսկի և ստակներն կ'կո-
ղակեն։ Երիտասարդաց մին
րիփօյլը քաշելով սակայն, չա-
րագործաց գլխաւորն սպաննելու
է կըսեն։ —Բշ. առաւօտ ալ Անգ-
ղիոյ հիւպատոսարանին առջեւ
5 զինեալ գողեր անցորդի մը
վրայ յարձակելով ժամացոյցն
ու 12 մէծիտէն կ'յափշտակեն։
—Իսկ ասոնց մէջ ամենէն զար-
մանալին է՝ գողերու 2 խմբա-
եակներու մէջ, կալածօ փողո-
ցը, տեղի ունեցած կռիւք։ Այս
խմբակներէն մին տուն մը կո-
ղակած ըլլալով ետ կ'գառնար
գիշերանց իր կողոպուտովքերը
դէմը ուրիշ գողերու խմբեակ
մ'երկելով, կողոպուտին ինքն
ալ մասնակցիլ կուզէ, որմէ յա-
ռաւ կ'գայ մէջերնին սոսկալի
կռիւ մը։ Այս կուռն մէջ գող-
ցուած նիւթերն կարծես հրաշ-
քով կանհետանան և ուր գա-
ցած ըլլալը անյայտ կ'մնայ։ —
Մանիսայի ճանապարհ վրայ, Սա-
պոնճու-Պէյի մետերը, 25 յայէկ-
ներու խումբ մը Պուրնապաթի
2 եղբարց վրայ յարձակելով, ա-
սոնցմէ մին հրացանի հարուա-
ծով մը վիրաւորելէն ետքը, միւ-
սին վրայի 14.000 զրչի չափ բա-
տակի ալ կ'յափշտակեն։ —Թի-
րալէն ալ կ'ծանուցանեն թէ՝
անդոյն ոստիկանութիւնը յա-
ջողի է այն կողմերը մաքրել
խել մ'աւազակներէ, որոցմէ
Աթաթէի Մէհմէտ և Ավճը օղ-
լու իսա աւազակներն սպաննե-
րու են տեղի ունեցած կռու-
մը մէջ։

—Կ'հաւատեն թէ Զմիւռ-
նիոյ ֆաղաքապետութիւնը գի-
տաւորութիւն ունի եղբւր քա-
ղաքին ալիւալ թաղերը 30ի
չափ կազմ լապտերներ հաստա-
տել։ —Կրտսի՝ թէ այդ գի-
տաւորութիւնն ալ մեր Պոլսոյ
ֆաղաքապետութեան գիտաւո-
րութեանը պէս չըլլար, որ շա-
րունակ կ'լսուէր, բայց շարունակ
Պոլսոյ լծադերնուս փողոցներն
ալ միշտ մթութեան ու խաւա-
րի մէջ կ'մնան։

ՊԱՏԿԵՐԱԶԱՐԴ ՊԱՏՄՈՒԹԻԻՆ
ԱՐԵՒԵԼԻԱՆ ՊԱՏԵՐԱԶՄԻ
Թարգմանեալ ի Գաղղիականէն

Վերջին տաճկա-առասկան պա-
տերազմին վրայով դադարեալ լեզ-
ւին մէջ մէկ քանի տարբեր հեղի-
նակութեամբ հրատարակուած գոր-
ծերէն ամենէն անկողմնակալն ու
ճշգրտագոյնութեամբ Ա. Լը Ֆոնի երկն
ըլլալով սորա հայերէն թարգմանու-

թիւնը տեսր առ տեսր սկսած է
հրատարակուիլ, Արամեան տպագ-
րութեամբ, մաքուր թղթի վրայ,
բնագիր և քսածալ իւրաքանչիւր
ետրը 2 պատկերօք զարգարեալ։

Սոյն հրատարակութիւնը խիստ
հետաքրքրական և միանգամայն
օգտակար գործ մը ըլլալով, կը հը-
րաւիրուի յարգոյ հասարակութիւնը
մէկ մէկ օրինակ ունենալու անկէ,
որով թարգմանչին աշխատութիւնն
ու խնամքն արդիւնաւորելուն ալ
պատճառ մը կըլլայ։

Մինչև 2 տետր հրատարակ-
ուած է։ Կեդրոնատեղին է Յը-
րէկեան գրատունը, զին թերթին
1 շաբաթաթիւ արծաթ։

ՆՈՐ ՀՐԱՏԱՐԱՆՈՒԹԻՒՆ
ՏԵՏԵՆԱՆ
ԺՕԶԷՅ ՊԱԼԱՍՄՕ
ԹԱՐԴՄԱՆԵՑ

ՊԱՐԱՊԵՏ ԷԹ. ԵՆԱՄԱՆԱՆ

Աղէյանդր Տիւմա գաղղիացի
մեծանուն վիպասանին գրչէն ելած
սոյն գործին ծրագրն է վերջին հա-
տորն ալ իզմիրի Տէսէեան եղբարց
տպարանէն ի լոյս ընծայուելով Պոլսո
հասած է։ Այս գեղեցիկ վէպին մէջ
ուր Լուի Ժեյ-Կեանքը, վարքն ու
վարձանը նկարագրուած են, հետ
զհետէ կ'ներկայանան Վոլթէն եւ
Թոմաս՝ անցեալ դարուն այն երկու
մեծ մարդիկը, թագուն գիտութիւն-
ներ կ'յայտնուին, Մասնաց օթեակ-
ները օտարին առջև կ'բացուին, Ա-
մեն կարգի և հասակի մարդ իւր
սիրած նիւթը հոն կ'գտնէ ևն։

Կը ծախուի կէնի ճամբ 2 թիւն
կիրէր ճատտէսի թիւ 3 Ս. Ղուկա-
սեան գրատունը և ուրիշ գրովա-
ճառաց քով։
Գին 2 ֆրանք 25 սաթ։

ՆՈՐ ԸՆԹԵՐՅԱՐԱՆ
ՅՕՐԻՆԵՑ Մ. ՄԱՄՈՒՐԵԱՆ

Կ'ծախուի Եէնի-ճամբ 2 թիւն
կիրէր ճատտէսի թիւ 2 Ս. Ղուկա-
սեան գրատունը և ուրիշ գրովա-
ճառաց քով։
Գին 1 ֆրանք

ՇԱՐԳ
ՄՈՒՀԱՐԷՊԵՍԻ ՀԻՔԵԱՅԵՍԻ
ՀԵՂԻՆԱԿՈՒԹԻՒՆ

ՊԱՐԴՄԱՆ ՊԵՅԻ

Վսեմ. Վարդան Պէյի գրչէն
ելած սոյն ընտիր պատմութիւնը՝ զոյ-
մինչև հիմայ թէրճէմանը—Էֆըքար
լրագրոյն մէջ մաս առ մաս կը հը-
րատարակուի, այս անգամ կրկին
սրբագրութեամբ թերթ առ թերթ
հրատարակուի սկսած է մաքուր
տպագրութեամբ, և որուն ութը ե-
րեսէ բայ կաղիւ մէկ թերթը՝ 3
ղշ. և տասը թերթերէ բաղկացեալ
մէկ մասը 31 զշ. և երեք մասերէ
բաղկացեալ մէկ հատորը 31 զշ. կը
ծախուի ողջ թղթագրամ։

Մէկ հատորի համար մ'այն բա-
ժանորդ կրնայ ընդունուիլ կանխիկ
70 զշ. վճարելով։

Բաժանորդագրութեան տեղն է
ու Պոլսո Սուլթան համամ Նշան էֆ
Պէրպէրեանի փողոցատունը, Ին-
րոյ թարլա Պաշի Համիդամ ընկ.
զօսարանէ իտրիէ, Սարաճեանէ
չարըսը Հաճի կարտպետ Ասատուր-
եան խանութիւն։

Թերթ առ թերթ կամ մաս առ
մաս վերագրեալ տեղերէ՝ զատ՝ հե-
տեւեալ հեղիւրն ալ կը ծախուին։
Պոլսո Էմին Էօնիւ Սուճի Պողոս
աղայի խանութիւն, Բերայ Մեծ փողոց
ձխալճառաց խանութները, Թարլա
Պաշի ձխալճառ Անդրէաս աղայի
խանութը թէ՛ Պոլսոյ և թէ՛ Ղալա-
թիոյ րոյրագրարանաւաց քով։

Տէր և հրատարակիչ Միհրան Ս.
Քիթապճեան։

ՂԱԼԹԻԱ ԴՇ 7 ՄԱՐԱՍ
ԸՆԴՀ. ՊԱՐՏ. ԱՐԺ.

Բաց	13.05
Գոց	12.38
Բարձր գին	13.05
Յած գին	12.37
Թղթագրամ բաց	489.00
բարձր	522.00
ցած	489.00
Ժամը 11	522.00
Փոխ. 63ի	Ֆր 072.00
» 65ի	» 075.00
» 69ի	» 072.00
» 73ի	» 068.00
Գանձատուին	22.00
Սօսիթէ Ժէնէրալ	4.20
Սօսիթէ Թթօման	3.00
Պանք տը Բօնաթ	6.12
Բրէտի Ժէնէրալ	5.05
Թրամիլէյ	1.75
Բուս. կրկաթուղի	46.00

ԸՆԹԱՅՔ ԴՐԱՄՈՑ
(Ուճ. օրի 100 րոյ 1 Կալու)

Սնդղ. սակի	109.20
Գաղղ.	87.11
Բօլ	89.18
Քարայօն արծաթ	16.20
» թղթագրամ	09.00
Քրքմից	51.12
Հինգնոց	23.00
Մէթալիք	23.30
Ճերմակ մէճիտ	07.29
Պղինճ	180.00

ՄԻՆԱՍԵԱՆԻՆ ՄԱՂԱԶԱՆ
ԳՏԵՆՈՒԱՆ
ՈՒ

ՓԱՆԱՍԷ

Կոչուած ցաւի դեղը բոլորովին
բուսեղէններէ բաղադրուած ըլլալով
թէ՛ ներսէն և թէ՛ դուրսէն կը գոր-
ծածուի ու բազմաթիւ ցաւեր ու հի-
ւանդութիւններ շուտով կը բժշկէ։
Ինչպէս որ վարը յիշուած է։

Ամեն տեսակ Գոլի, Բստամբ-
օի, մէլքի կամ Էղիքներու ցաւեր
ու նաև Թանջը, Քօլէրա և այլ ա-
մառուան հիւանդութիւններ ունե-
ցողները այս դեղէն խմելու են հե-
տեւեալ կերպով։ Այն գաւաթ ջուրի
մէջ, զիր ապուրի մը զրգալէն աւելի
չափար, վրան լեցուր անուշի զրգալ
մը փախտէ աղէկ մը խառնէ ու
խմէ։

Կակորդի հիւանդութեանց, և
Առեցքի համար դեղը վերոյիշեալ
կերպով պատրաստէ ու ժամը կամ
երկու ժամը հեղ մը՝ մէկ կամ
երկու տնուշի զրգալ այն բաղադ-
րութեան խմէ։ Յօդագալի, Բիւմա-
թիկի, Ուքի ցաւի, Ստամբուի ու
տեսակ տեսակ կանակի ցաւերու հա-
մար դուրսէն փախտէ քսելով աղէկ
մը շիւկու է։ Այլապէս ցաւի համար
քիչ մը բալմակի փախտէ մէջ
թաթիւնով ցաւած ակուպին վրայ
դնելու է։

Ամեն ատեն երբոր ցաւի մը հա-
մար դուրսէն փախտէ քսել Գարկ
կըլլայ, եթէ քիչ մը ալ խմուի աւել-
ի շուտ բժշկութիւն կըլլայ։

Մարմնոյ պրոսած կամ ճմուռ-
ած տեղերը բժշկելու համար վրան-
գը պատահածին՝ պէս փախտէն
վրան աղէկ մը լեցնելու է։ Գոնա-
կով ևն կտրուած վերքերը բժշկե-
լու համար՝ արեւն շարած շուտով
մը վրքը կապելու և դապին վրայէն
Փանպտէ լեցնելու է մինչև օր Լաւ մը

Թրջի փախտէն նաև արեան շրջա-
նը կարագացնէ ու բոլոր բնութիւնը
կը զօրացնէ։

Այս դեղին օգտակարութեանը
վրայ երկարօրէն գրել աւելորդ կը
համարեմք, զործածողները զայն
միշտ կը գոլին, ուզողը կրնայ տն-
ձամբ փորձել։ Գինն աժան է։ Կը
ծախուի Ս. Նասեան և Ընկերաց Ս.
մերիկեան փաճառատունը որ ի Ղա-
լաթիա կ'Պոլսո։

ՀՐԱՆՏ ԱՍՍՏՈՒՐ
ՊԱՏԱՆԷԿԱՆ ՆԵՐՇՆՁՈՒՄՆԵՐ

Ուսումնասէր հեղինակն այս
գրքուկին մէջ ամփոփած է իւր
գրուածներն, որք պատանեկան
հասակի մէջ երկնուած. դեռ ա-
հաս հոգեւոր մը առաջին զգա-
ցուններն և մտածումներն կը
պարունակեն։

Կ'ծախուի Եէնի-ճամբ 2 թիւն
կիրէր ճատտէսի թիւ 2, Ս.
Ղուկասեան գրատունը և ուրիշ
հայ գրովաճառաց քով, ի Գին
75 սանթիմ։

ԲԱՆԱԼԻ
ՀԱՅԵՐԷՆ ԵՐԱՐԱՐՈՒԹԵԱՆ
ԳՐԵՑ

Մ. ՄԱՄՈՒՐԵԱՆ

Ահաւասիկ գեղեցիկ մեթոտ մը
Մամուրեան էֆի աշխատասիրու-
թեամբ մուտ գտնելով մայրենի լեզ-
ուի ուսման մէջ, կ'աւալնորդէ ա-
շակերտները շարադիր լինելու, չըս-
պանելով որ անոնք քերականութեան
տաղտկալի չըլանէն անցին։

Այս գրքիցը Զմիւռնիոյ Տէտէ-
եանդարաց տպարանէն ի լոյս ըն-
ծայուելով կը ծախուի Եէնի-ճամբ
2 թիւն կիրէր ճատտէսի թիւ 2, Ս.
Ղուկասեան գրատունը և ուրիշ գր-
ովաճառաց քով։ Գին 50 սանթիմ։

ՆՈՐ ՕՐԱՅՈՅՑ
4 8 7 9

ԹՈՒԱԿԱՆԻ ՔՐԻՍՏՈՍԻ

Կ'ծախուի Գին 20 փարա մէճիտ

ԸՆԴԱՐԱՆԻ ՕՐԱՅՈՅՑ
ՊԱՏԵՐԱԶԱՐԴ
4 8 7 9

ԹՈՒԱԿԱՆԻ ՔՐԻՍՏՈՍԻ

Գին 40 փարա մէճիտ

ՏԵՐԵՐԵՆԻ ԶԵՐԵՐԵՆ

15 կնիդանդիր պատկերներով
զարդադեալ սոյն ընդաճակ օրացոյցը
բաց ի բուն օրացոյցէն կ'ստորանակէ
նաև վերջին Ռուս-Տաճկական պա-
տերազմին համառօտ պատմութիւնը,
առողջապահական ամենակարեւոր
գիտելիքներ, բարոյական սկզբունք,
ներ, խայթման և այրաթի դեղեր,
փաստակար ճճիներ ընդհուր կերպեր։
Ասոնցմէ զատ աղգային նշանաւոր
բանաստեղծ Քամաւ Գաթիպայի
«Նայերուս Թաթը» վերնագրով մէկ
չնայխարհիկ ոտանաւորը։

Կ'ծախուի Զարդարեան փաճախ
աւտունը, Սուլթան Համամ փողոց,
Ալըր Էֆէնդի խանի դիմաց, թիւ
13 և գրովաճառաց քով։

ՏԵՐ ԵՒ ՊԱՏԱՍԻԱՆԱՏՈՒ
ՊՕՂՈՍ ՔՐԻՍՏՈՍԻ
ՂԱԼԹԻԱ ԲԵՐԶԷՄԷ-ԲԱ
ԶԱՐ ՊԱՔԵՐ ՓՈՊՈՅ ԹԻՆ 12